

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՏՈՒԿ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ, ՀԱԿԱԳՆԱԳՑՄԱՆ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

երրորդ երկրների հետ առեւտուր իրականացնելիս հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցների համաձայնեցված կիրառության եւ հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի հաշվեգրման եւ բաշխման կարգի սահմանման նպատակներով,

ցանկանալով ապահովել ազգային արտադրության պաշտպանություն, ազգային եւ արտասահմանյան ապրանք արտադրողների միջեւ մրցակցության զարգացմանը նպաստող պայմանների ստեղծում, ինչպես նաեւ՝ ազգային արտադրանքի մրցունակության մեծացում,

ղեկավարվելով 2008 թվականի հունվարի 25-ի «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցների կիրառման մասին» Համաձայնագրի, 2010 թվականի մայիսի 20-ի «Մաքսային միությունում ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ գանձումների) հաշվեգրման եւ բաշխման կարգի սահմանման եւ կիրառման մասին» Համաձայնագրի դրույթներով եւ Մաքսային միության իրավապայմանագրային հիմքը ձեւավորող այլ փաստաթղթերով, ինչպես նաեւ՝ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող նորմերով եւ սկզբունքներով,

համաձայնեցին հետեւյալի մասին՝

Հոդված 1

Հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցները, որոնք Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության համաձայն՝ կիրառվում են երրորդ երկրներից Մաքսային միության անդամ պետությունների տարածքներ ապրանքների ներմուծման առնչությամբ, ենթակա են վերանայման այն առումով, որպեսզի սահմանվեն համանման ապրանքի (հակազնազցման եւ փոխհատուցման գծով ուսումնասիրությունների նպատակով) կամ համանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքների (հատուկ պաշտպանական ուսումնասիրության նպատակով) ազգային արտադրողների արտադրության մասնաբաժինը, որոնց վերաբերյալ արձանագրվել է վնաս կամ վնաս հասցնելու վտանգ՝ Մաքսային միության անդամ պետությունների արտադրության ընդհանուր ծավալի մեջ:

Համանման ապրանքի (հակազնազցման եւ փոխհատուցման գծով ուսումնասիրությունների նպատակով) կամ համանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքների (հատուկ պաշտպանական ուսումնասիրության նպատակով) արտադրության ծավալները որոշվում են որպես այն ապրանքի ծավալներ, որն արտադրվել է սույն Համաձայնագիրն ստորագրելու ամսաթվին անմիջապես նախորդող օրացուցային երեք տարիների ընթացքում:

Նշված վերանայումն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից, որոնց տարածքում սահմանվել է համապատասխան միջոցը՝ դրա մասին միաժամանակ ծանուցելով շահագրգիռ բոլոր անձանց:

Սույն Համաձայնագրի նպատակով Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմիններ ասելով հասկացվում են ազգային մարմինները, որոնք պատասխանատու են հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցների սահմանմանը նախորդող ուսումնասիրությունների անցկացման համար՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության համաձայն:

Հոդված 2

Այն դեպքում, եթե սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված երրորդ երկրներից Մաքսային միության անդամ պետության տարածք ապրանքների ներմուծման առնչությամբ կիրառվող հատուկ պաշտպանական, հակազնազցման կամ փոխհատուցման միջոցի վերանայման արդյունքներով սահմանվում է, որ համանման ապրանքի (հակազնազցման եւ փոխհատուցման գծով ուսումնասիրությունների նպատակով) կամ համանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքների (հատուկ պաշտպանական ուսումնասիրության նպատակով) ազգային արտադրողներին բաժին է ընկնում Մաքսային միության անդամ պետությունների արտադրության ընդհանուր ծավալի զգալի մասը, որը, սակայն, պակաս չէ 25 տոկոսից, ապա այդ միջոցը կիրառվում է երրորդ երկրներից Մաքսային միության միասնական մաքսային տարածք ապրանքի ներմուծման առնչությամբ՝ Մաքսային միության հանձնաժողովի համապատասխան որոշման հիման վրա՝ նախքան այդ միջոցն ընդունած Կողմի սահմանած միջոցի գործողության ժամկետի ավարտը:

Հատուկ պաշտպանական, հակազնազցման կամ փոխհատուցման միջոցը՝ վերջինիս առնչությամբ իրականացված վերանայման արդյունքներով Մաքսային միության միասնական մաքսային տարածքում սահմանելու մասին Մաքսային միության հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ իրավասու մարմնի նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձի դիմումի համաձայն՝ կարող է անցկացվել կրկնակի ուսումնասիրություն՝ 2008 թվականի հունվարի 25-ի «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցների կիրառման մասին» Համաձայնագրին համապատասխան:

Սույն Հոդվածի երկրորդ պարբերության մեջ նշված կրկնակի ուսումնասիրությունների առնչությամբ չեն կիրառվում 2008 թվականի հունվարի 25-ի «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցների կիրառման մասին» Համաձայնագրի 17-րդ

հողվածի 4-րդ եւ 27-րդ հողվածի 4-րդ կետերի դրույթները, որոնցով սահմանվում է նվազագույն այն ժամկետը, որը լրանալուց հետո կարող է սկսվել հակազնազցման կամ փոխհատուցման գծով կրկնակի ուսումնասիրություն:

Մաքսային միության միասնական մաքսային տարածքում վերանայման արդյունքներով սահմանված միջոցին առնչվող հատուկ պաշտպանական, հակազնազցման կամ փոխհատուցման գծով կրկնակի ուսումնասիրությունն անց է կացվում Մաքսային միության անդամ պետության լիազոր մարմնի կողմից, որն իրականացրել է համապատասխան ազգային միջոցի վերանայումը:

Հոդված 3

Երրորդ երկրներից տվյալ պետության տարածք ապրանքների ներմուծման առնչությամբ կիրառվող հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցների՝ սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված վերանայումն իրականացնող Մաքսային միության անդամ պետության լիազոր մարմինն այդ վերանայման արդյունքները ներկայացնում է Մաքսային միության անդամ պետությունների այլ լիազոր մարմինների ուսումնասիրությանը:

Երրորդ երկրներից տվյալ պետության տարածք ապրանքների ներմուծման առնչությամբ կիրառվող հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցների վերանայումն իրականացնելիս Մաքսային միության անդամ պետության լիազոր մարմինն ապահովում է դրա հրապարակայնությունն ու թափանցիկությունը եւ շահագրգիռ անձանց տալիս տվյալ հարցի շուրջ իրենց մեկնաբանությունները ներկայացնելու հնարավորություն՝ Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրության համաձայն, որի լիազոր մարմինն իրականացնում է տվյալ վերանայումը:

Հոդված 4

Հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցը Մաքսային միության միասնական մաքսային տարածքում կիրառելու մասին Մաքսային միության հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից դադարում է համապատասխան ազգային միջոցի գործողությունը:

Հոդված 5

Այն դեպքում, եթե երրորդ երկրներից Մաքսային միության անդամ պետության տարածք ապրանքների ներմուծման առնչությամբ կիրառվող հատուկ պաշտպանական, հակազնազցման կամ փոխհատուցման միջոցի՝ սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված վերանայման արդյունքներով սահմանվում է, որ համանման ապրանքի (հակազնազցման եւ փոխհատուցման գծով ուսումնասիրությունների նպատակով) կամ համանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքների (հատուկ պաշտպանական ուսումնասիրության նպատակով) ազգային արտադրողներին բաժին է ընկնում Մաքսային միության անդամ պետությունների արտադրության ընդհանուր ծավալի 25 տոկոսից պակաս մասը, ապա այդ միջոցը կարող է գործել մինչեւ գործողության ժամկետի ավարտը՝ Մաքսային միության համապատասխան անդամ պետության օրենսդրության համաձայն՝ առանց ժամկետի երկարաձգման:

Հոդված 6

Մինչեւ սույն Համաձայնագրի ստորագրման ամսաթիվն ավարտված ուսումնասիրությունների արդյունքներով հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցները սահմանվում են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության համաձայն եւ ենթակա են

վերանայման՝ սույն Համաձայնագրի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ հոդվածների դրույթների համաձայն:

Մինչեւ սույն Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը Կողմերի կողմից չավարտված ուսումնասիրություններն ավարտին են հասցվում Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից՝ 2008 թվականի հունվարի 25-ի «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցների կիրառման մասին» Համաձայնագրի դրույթների համաձայն:

Մաքսային միության անդամ պետության ուսումնասիրությունն անցկացնող լիազոր մարմինը սահմանում է Մաքսային միության անդամ պետությունների՝ համանման ապրանքի (հակազնազցման եւ փոխհատուցման գծով ուսումնասիրությունների նպատակով) կամ համանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքների (հատուկ պաշտպանական ուսումնասիրության նպատակով) այն արտադրողների մասնաբաժինը, որոնք կողմ են հանդես եկել դիմումին՝ Մաքսային միության անդամ պետությունների արտադրության ընդհանուր ծավալի մեջ: Ուսումնասիրությունը շարունակվում է, եթե արդյունքում սահմանվում է, որ համանման ապրանքի (հակազնազցման եւ փոխհատուցման գծով ուսումնասիրությունների նպատակով) կամ համանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքների (հատուկ պաշտպանական ուսումնասիրության նպատակով) այդ արտադրողներին բաժին է ընկնում Մաքսային միության անդամ պետությունների արտադրության ընդհանուր ծավալի 25 տոկոսից ոչ պակաս մասը:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի 1-ին, 2-րդ, 3-րդ հոդվածների դրույթների համաձայն վերանայումն իրականացնելու ընթացքում եւ (կամ) Մաքսային միության

միասնական մաքսային տարածքում հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցներ սահմանելուց հետո

Կողմերն անց են կացնում խորհրդակցություններ՝ համանման ապրանքի (հակազնազցման եւ փոխհատուցման գծով ուսումնասիրությունների նպատակով) կամ համանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքների (հատուկ պաշտպանական ուսումնասիրության նպատակով) ազգային սպառողների եւ արտադրողների հետ,

Կողմերը սպառողների եւ արտադրողների միջեւ ապահովում են այնպիսի հարցերի շուրջ խորհրդակցություններ անցկացնելու հնարավորություն, որոնք կապված են Մաքսային միության միասնական մաքսային տարածքում այդպիսի միջոցները սահմանելու հետ,

Կողմերից յուրաքանչյուրը Մաքսային միության այլ անդամ պետությունների սպառողների համար ապահովում է տվյալ Կողմ հանդիսացող պետության տարածքում արտադրվող այն ապրանքներին հասանելիություն ունենալու անխտրական պայմաններ, որոնց առնչությամբ Կողմերը Մաքսային միության միասնական մաքսային տարածքում այդպիսի միջոցներ են սահմանում:

Շահագրգիռ Կողմի առաջարկությամբ՝ Մաքսային միության հանձնաժողովն ուսումնասիրում է սույն Հոդվածի կիրառման հետ կապված հարցերը եւ ընդունում անհրաժեշտ որոշումներ՝ Մաքսային միության հանձնաժողովի կանոնների եւ ընթացակարգերի համաձայն:

Հոդված 8

Սույն Համաձայնագրի 1-ին, 2-րդ, 3-րդ հոդվածների դրույթների համաձայն վերանայումն իրականացնելու ընթացքում Մաքսային միության հանձնաժողովն ապահովում է օտարերկրյա այն պետությունների եւ արտահանողների հետ խորհրդակցությունների անցկացումը, որոնց շահերը շոշափվում են այդ վերանայման կապակցությամբ:

Հոդված 9

Ուսումնասիրությունները, այդ թվում՝ կրկնակի ուսումնասիրությունները՝ մինչեւ Մաքսային միության հանձնաժողովի կողմից համապատասխան որոշում կայացնելը, անց են կացվում Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից, ներառյալ՝ սեփական նախաձեռնությամբ՝ 2008 թվականի հունվարի 25-ի «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցների կիրառման մասին» Համաձայնագրի դրույթների համաձայն: Ընդ որում, նման ուսումնասիրություններ անցկացնելու մասին դիմումները ներկայացվում են Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմիններին՝ Մաքսային միության անդամ պետությունների տնտեսության ճյուղի անունից՝ սույն Հոդվածում նշված համաձայնագրի դրույթների համաձայն:

Հատուկ պաշտպանական, հակազնազցման կամ փոխհատուցման միջոցի կիրառման մասին դիմումը, ինչպես նաեւ՝ հատուկ պաշտպանական, հակազնազցման կամ փոխհատուցման գծով կրկնակի ուսումնասիրություն անցկացնելու մասին դիմումը ներկայացվում են Մաքսային միության այն անդամ պետության լիազոր մարմին, որի տարածքում գրանցված են համանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքների (հատուկ պաշտպանական ուսումնասիրության նպատակով) կամ համանման ապրանքի (հակազնազցման եւ փոխհատուցման գծով ուսումնասիրությունների նպատակով) արտադրողները:

Այն դեպքում, եթե արտադրողները գրանցված են Մաքսային միության մեկից ավելի անդամ պետությունում, ապա այդ դիմումը ներկայացվում է Մաքսային միության այն անդամ պետության լիազոր մարմին, որի տարածքում գրանցված են այն արտադրողները, որոնց բաժին է ընկնում համապատասխանաբար համանման կամ անմիջականորեն մրցակցող ապրանքների արտադրության միասնական ծավալի մեծ մասը, կամ այն արտադրողների համանման ապրանքի, որոնց կողմից կամ անունից ներկայացվում է դիմումը:

Մաքսային միության հանձնաժողովը հաստատում է հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցները սահմանելուն նախորդող՝ Մաքսային միության անդամ պետությունների կողմից ուսումնասիրությունների անցկացման եւ ուսումնասիրությունների արդյունքներով Մաքսային միության հանձնաժողովում առաջարկությունների ներկայացման կանոնակարգը:

Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցներ սահմանելուն նախորդող ուսումնասիրությունների նպատակով կիրառվող տվյալների ձեռավորման կարգը որոշում են Կողմերը՝ առանձին:

Մաքսային միության միասնական մաքսային տարածքում սահմանված հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցների վերանայումներ եւ ուսումնասիրություններ անցկացնելիս Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմիններն ապահովում են իրականացվող գործընթացների հրապարակայնությունն ու թափանցիկությունը, նաեւ՝ շահագրգիռ անձանց ընձեռնում են ուսումնասիրությունն անցկացնող Մաքսային միության անդամ պետության լիազոր մարմինն իրենց մեկնաբանությունները ներկայացնելու հնարավորություն՝ համաձայն 2008 թվականի հունվարի 25-ի «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցների կիրառման մասին» Համաձայնագրի:

Հոդված 10

Մաքսային միության անդամ պետությունների պետական իշխանության (կառավարման) մարմինները, որոնք լիազորված են մաքսային գործի, պետական վիճակագրություն վարելու, հարկման եւ իրավաբանական անձանց գրանցելու բնագավառներում, Մաքսային միության անդամ պետությունների պետական իշխանության (կառավարման) այլ մարմինները եւ պետական իշխանության

(կառավարման) տարածքային (տեղական) մարմինները աջակցություն են ցուցաբերում երրորդ երկրների ապրանքներին առնչվող ուսումնասիրությունների անցկացման գործընթացում եւ Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմիններին են տրամադրում ուսումնասիրությունների անցկացման նպատակով անհրաժեշտ տվյալներ, այդ թվում՝ գաղտնի տեղեկություններ ներառող:

Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմիններին տրամադրվող տեղեկությունները կարող են կիրառվել միայն այն նպատակով, որի համար դրանք պահանջվել են:

Հոդված 11

Շահագրգիռ անձի կողմից Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմինն տրամադրվող տեղեկություններն ուսումնասիրվում են որպես գաղտնի՝ տվյալ անձի կողմից այնպիսի հիմնավորումներ ներկայացնելու դեպքում, որոնք վկայում են նաեւ նրա մասին, որ նման տեղեկությունների բացահայտումը մրցակցային առավելություն կտա երրորդ անձին կամ կհանգեցնի բացասական հետեւանքների այն անձի համար, որը տրամադրել է այդպիսի տեղեկությունները կամ այն անձի համար, որից նա ստացել է այդ տեղեկությունները:

Գաղտնի տեղեկությունները չեն հրապարակվում առանց դրանք ներկայացրած շահագրգիռ անձի թույլտվության, բացառությամբ Կողմեր հանդիսացող յուրաքանչյուր պետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

Ուսումնասիրությունն անցկացնելու ընթացքում ստացվող գաղտնի տեղեկությունները ենթակա են պաշտպանության՝ Մաքսային միության անդամ պետությունների ազգային օրենսդրության համաձայն:

Գաղտնի տեղեկությունները տրամադրող շահագրգիռ անձինք պարտավոր են դրանց հետ միասին տրամադրել նման տեղեկությունների ոչ գաղտնի տարբերակը: Ոչ գաղտնի տարբերակը պետք է լինի բավարար չափով մանրամասն՝ գաղտնի տարբերակով ներկայացված տեղեկությունների էությունը հասկանալու համար:

Բացառիկ դեպքերում շահագրգիռ անձինք կարող են ներկայացնել գաղտնի տեղեկությունները ոչ գաղտնի տարբերակով տրամադրելու անհնարինության հիմնավորումները, նշելով, թե ինչ պատճառներով հնարավոր չէ ներկայացնել ոչ գաղտնի տարբերակը:

Այն դեպքում, եթե Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմինը հաստատի, որ շահագրգիռ անձի կողմից ներկայացված հիմնավորումներով հնարավոր չէ տրամադրված տեղեկությունները որակել որպես գաղտնի, կամ եթե գաղտնի տեղեկությունների ոչ գաղտնի տարբերակը չներկայացրած շահագրգիռ անձը չի ներկայացնում գաղտնի տեղեկությունները ոչ գաղտնի տարբերակով տրամադրելու անհնարինության հիմնավորում կամ տրամադրում է այնպիսի տեղեկություններ, որոնք չեն համարվում գաղտնի տեղեկությունները ոչ գաղտնի տարբերակով ներկայացնելու անհնարինության հիմնավորում, ապա Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմինը կարող է հաշվի չառնել այդ տեղեկությունները:

Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմնի պաշտոնատար անձինք եւ այլ անձինք, որոնք ունեն գաղտնի տեղեկություններին հասանելիություն, պատասխանատվություն են կրում գաղտնի տեղեկությունները հրապարակելու համար՝ լիազոր մարմնի գտնվելու վայրի պետության օրենսդրության համաձայն:

Հոդված 12

Նախքան երրորդ երկրներից Մաքսային միության միասնական մաքսային տարածք ապրանքների ներմուծմանն առնչվող հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցների՝ Մաքսային միության հանձնաժողովի կողմից սահմանելը Մաքսային միության անդամ պետությունները կիրառում են հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման այնպիսի միջոցներ, որոնք Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության համաձայն սահմանվել են նախկինում, եթե սույն Համաձայնագրով եւ Մաքսային միության հանձնաժողովի որոշումներով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 13

Հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի, այդ թվում՝ նախնական (ժամանակավոր) հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի վճարումը, որոնք սահմանված են ազգային մակարդակով, իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության ազգային օրենսդրության համաձայն, որի որոշմամբ կիրառվում են տվյալ տուրքերը:

Հոդված 14

Մաքսային միության հանձնաժողովի հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցը կիրառելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած՝ հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի (բացառությամբ նախնական հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի) գումարները ենթակա են հաշվեգրման եւ բաշխման՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքով եւ 2010 թվականի մայիսի 20-ի «Մաքսային միությունում ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի,

հարկերի եւ գանձումների) հաշվեգրման եւ բաշխման կարգի սահմանման եւ կիրառման մասին» Համաձայնագրով սահմանված եւ ներմուծման մաքսատուրքերի համար նախատեսված կարգով:

Հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերը չեն կարող հաշվանցվել այլ վճարների վճարային հաշվին:

Հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի վճարային հաշվին կարող են հաշվանցվել այն հարկերն ու հավաքագրումները/գանձումները, նաեւ՝ այլ վճարներ (բացառությամբ ներմուծման մաքսատուրքերի), որոնք մուտք են եղել Մաքսային միության անդամ պետության բյուջեի կատարման դրամարկղային սպասարկումն իրականացնող պետական մարմնի միասնական հաշվին:

Նախնական հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի վճարումն իրականացվում է Մաքսային միության անդամ պետության ազգային օրենսդրության համաձայն:

Համապատասխան ուսումնասիրության արդյունքներով՝ Մաքսային միության հանձնաժողովի հատուկ պաշտպանական, հակազնազցման կամ փոխհատուցման միջոցը կիրառելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած՝ նախնական հատուկ, հակազնազցման կամ փոխհատուցման վճարված տուրքի (ամբողջությամբ կամ մասամբ՝ 2008 թվականի հունվարի 25-ի «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցների կիրառման մասին» Համաձայնագրով սահմանված դեպքերում) գումարները ենթակա են հաշվեգրման եւ բաշխման՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքով եւ 2010 թվականի մայիսի 20-ի «Մաքսային միությունում ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ գանձումների) հաշվեգրման եւ բաշխման կարգի սահմանման եւ կիրառման մասին» Համաձայնագրով սահմանված եւ ներմուծման մաքսատուրքերի համար նախատեսված կարգով:

Այն դեպքում, եթե ուսումնասիրության արդյունքներով սահմանվում է, որ հատուկ, հակազնազցման կամ փոխհատուցման միջոցի սահմանման հիմքերը բացակայում են, ապա նախնական հատուկ, հակազնազցման կամ փոխհատուցման վճարված տուրքի գումարները ենթակա են վճարողին վերադարձնելուն:

Դրամական այն միջոցները (ամբողջությամբ կամ մասամբ՝ 2008 թվականի հունվարի 25-ի «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցների կիրառման մասին» Համաձայնագրով սահմանված դեպքերում) վերադարձնելը, որոնք մուծվում են նախնական հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերը վճարելու համար՝ ուսումնասիրության նախնական արդյունքների համաձայն ընդունվող, իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որի մաքսային մարմինների կողմից գանձվել է նախնական հատուկ, հակազնազցման կամ փոխհատուցման տուրքը:

Այն դեպքում, եթե կրկնակի ուսումնասիրություն անցկացնելու շրջանակներում հակազնազցման կամ փոխհատուցման միջոցի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ ժամանակավորապես երկարաձգվում է համապատասխան միջոցի կիրառման ժամկետը, ապա մինչեւ այդ կրկնակի ուսումնասիրության ավարտը կիրառվող հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերը վճարվում են նախնական հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի վճարման համար սույն Համաձայնագրով սահմանված կարգով:

Եթե այն կրկնակի ուսումնասիրության արդյունքներով, որի անցկացման ընթացքում երկարաձգվել է հակազնազցման կամ փոխհատուցման միջոցի կիրառման ժամկետը, սահմանվում է, որ բացակայում են համապատասխան միջոցի գործողության ժամկետը երկարաձգելու հիմքերը, ապա այն ժամկետում գանձված հակազնազցման կամ փոխհատուցման տուրքերի գումարները, որի ընթացքում երկարաձգվել է համապատասխան միջոցի կիրառումը, ենթակա են վճարողին վերադարձնելուն՝ նախնական հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերը վերադարձնելու համար սահմանված կարգով:

Հատուկ, հակագնագցման եւ փոխհատուցման տուրքերի՝ հաշվարկվածից ավելի վճարված (հաշվարկվածից ավելի գանձված) գումարների վերադարձը վճարողին կատարվում է Մաքսային միության անդամ պետության բյուջեի կատարման դրամարկղային սպասարկումն իրականացնող մարմնի միասնական հաշվից՝ մաքսատուրքերի՝ հաշվարկվածից ավելի վճարված գումարները վերադարձնելու համար Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որի մաքսային մարմինների կողմից գանձվել է հատուկ, հակագնագցման կամ փոխհատուցման տուրքը՝ հաշվի առնելով 2010 թվականի մայիսի 20-ի «Մաքսային միությունում ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ գանձումների) հաշվեգրման եւ բաշխման կարգի սահմանման եւ կիրառման մասին» Համաձայնագրով սահմանված առանձնահատկությունները՝ ներմուծման մաքսատուրքերը վերադարձնելու համար:

Հոդված 15

Կողմերը որոշում են Մաքսային միության հանձնաժողովի կողմից ուսումնասիրությունների անցկացմանն առնչվող գործառույթների իրականացման կարգը, այդ թվում՝ Մաքսային միության հանձնաժողովի համապատասխան մարմինը եւ գաղտնի տեղեկությունների հետ աշխատելու կարգն ստեղծելու եւ (կամ) սահմանելու միջոցով:

Հոդված 16

Դատարանը, որին շնորհված են երրորդ երկրների լիազոր մարմինների եւ տնտեսվարող սուբյեկտների, ինչպես նաեւ՝ Մաքսային միության անդամ պետությունների տնտեսվարող սուբյեկտների հայցերը քննելու լիազորություններ, որոշվում է միջազգային առանձին պայմանագրով:

Կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը եւ տարաձայնությունները կարգավորվում են շահագրգիռ Կողմերի խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում շահագրգիռ Կողմերից որեւէ մեկի նախաձեռնությամբ վեճը փոխանցվում է Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 17

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 18

Սույն Համաձայնագիրը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման ամսաթվից, ենթակա է վավերացման եւ ուժի մեջ է մտնում վավերացման մասին վերջնական փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու պահից:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2010 թվականի նոյեմբերի 19-ին, մեկ բնօրինակից, ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահպանվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին կտրամադրի դրա վավերացված օրինակը:

Բելառուսի
Հանրապետության
Կառավարության կողմից

Ղազախստանի
Հանրապետության
Կառավարության կողմից

Ռուսաստանի
Դաշնության
Կառավարության կողմից